

20.301



ՀՅ ԳՐԱԴԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ № 3

Ո. Մանես

ՀԱՅԵՐԾԱԿԱՐԱԿԱՆ
ՎԱՐԱՐԱԿԱՆ-ՇԱՀԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԾԱԿԱՐԱԿԱՆ

3

Թարգմ. ուղա. Ֆ. Պ.

329.14
Մ-72

1907

~~566~~

329

4-69

line No. 102

Առաջ գտն Արդիւնիւն
Առաջ գտն Առաջ պրեգունում
Առաջ իւնլ- Ի Ե Ա Ռ Ա Կ Ո Ւ Մ

Обращайтесь с книгой любовно и аккуратно.

она служит не вам одному, а многим:

- 1) Не пачкайте книгу надписями и рисунками, не подчеркивайте слов. То, что полюбите в книге, писывайте в свою тетрадку.
 - 2) Не портите переплета. При чтении завертывайте его в бумагу.
 - 3) Не загибайте углов у страниц имейте лучше бумажную закладку.
 - 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
 - 5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.

Обращайтесь с книгой любовно и а

она служит не вам одному, а мнои

- 1) Не пачкайте книгу надписями и рисунками, черкивайте слова. То, что полюбите в книге, пишите в свою тетрадку.
 - 2) Не портите переплета. При чтении завяжите его в бумагу.
 - 3) Не загибайте углов у страниц имейте лужажную закладку.
 - 4) Не перелистывайте страниц грязными руками.
 - 5) Если у вас имеется в доме заразный болезнь, заявите об этом в библиотеку при книге.

КОГДА КНИГА ВЗЯТА

2187
440

Член УЧМ
СОУ-ГИММР.

1838
~~411~~
~~522~~
~~1615~~
~~2071~~

КОГДА КНИГА ВЗЯТА

15 JAN 2010

EMIS

440
15 JAN 2010

№ 3 ԳՐԱԴԱՐԱՆ „ՊԱՅ-ԲԱՐ-Ի” № 3

329.14

5-72

ՄՐ

Թ. ՄԻՆԵ

1343

329


17-62

ԻՆՉ ԵՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ



ԱՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ

175



Թարգմ. ուսու. Գ. Ա.

Թ Բ Յ 1 Բ 2

ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՌԱԽԵԿԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ,
ՊՈԼԻՑԵՏԱԿԱՆ 7.

Էլեկտրոպէշ. Հ. Աղանյան,

Պոլիցետական, 7.

1907

(16)

01 JUL 2013

Հ0301

Ի՞՞Զ ԵՆ ՍՈՎԱՐԵՑՆՈՒՄ

ՍՈՅԻԱԼ-ԴԵՄԾԿՐԱՏՆԵՐԸ

ԸՆ.Ռ.ԶՍ.ԲԱՆ.

Արևմտեան Եւրոպայի բոլոր երկիրներում,
Հիւսիսային Ամերիկայում և թէ ձապօնիա-
յում, մի խօսքով՝ այն տեղերում, ուր գոյու-
թիւն ունի կապիտալիստական արդիւնաբե-
րութիւն, այնտեղ՝ գոյութիւն ունի նաև Սօ-
ցիալ-Դեմոկրատական կուսակցութիւն: Մի-
քանի երկիրներում այդ կուսակցութիւնը ա-
նազին գեր է խաղում:

1903 թ. Գերմանիայում պարլամենտի
ընտրութիւնների ժամանակ Սօցիալ-Դեմո-
կրատներին ձայնատիւն 3,000,000 մարդ, այդ
3 միլիոնը գերմանական պարլամենտում ու-
նի 81 պատգամաւոր:

Խուսաստանում ևս բանտորների գիտակից
մասը միացաւ Խուսաստանի Սօցիալ-Դեմո-
կրատների կուսակցութեան հետ: Սօցիալ-
Դեմոկրատական կուսակցութիւնը բանտոր-
ների կամ սրոլետարիստի կուսակցութիւնն
է: Քանի-որ բանտորների շահերը բոլոր եր-
կիրներում միևնույն է, հէնց այդ պատճառով
էլ Շվեյցարիայի, Գերմանիայի և միւս եր-



360

41

Կիրների Սօցիալ-Դեմոկրատական կուսակցութիւնների ծրագիրները շատ մօտ են միմեանց: Այն նպատակները, որոնց ձգտում են ֆրանսիայի կամ Գերմանիայի Ա.-Դ., նոյնն են, ինչ որ ոռու կամ ճապօնական Սօցիալ-Դեմոկրանիքները: Անա թէ ինչո՞ւ բոլոր երկիրների գիտակից պրոլետարիատները իրօք կազմում են մի միջազգային սօցիալ-դեմոկրատական կուսակցութիւն:

Այդ կուսակցութիւնը երևակայութեան ծնունդ չէ աղիտատորների կամ չարամիտների, ինչպէս սիրում են հաստատել մեր հակառակորդները: Այդ գաղափարը առաջ է եկել մեզ շրջապատող կեանքից, հասարակութեան ամբողջ տնտեսական զարգացումից: Նրա քարոզածը հնարովի կամ երևակայական ցնորդները չեն. սա մի գաղափար է, որ պատմութեան և կապիտալիստական կեանքի լաւը ուսումնասիրութեան հետեանք է: Այս վարդապետութեան հայրը՝ իրաւամբ համարում են Կ. Մարքսին, որի անունով և սօցիալ-դեմոկրատներին անուանում են նաև Մարքսիստներ:

Գլ. I.

Առաւոտը վաղ երկար Բանտրական հարց: սուլիչը (բացօք) զարթեցնում է բանտրներին և աշխատանքի կանչում: Կէս ժամից յետոյ իրանց անկիւններից զուրս են սողում հարիւր-հազարաւոր բանտրներ և շրջապատմ գործարանները, Փարբիկանները և արհեստանոցները: Էլի մի կէս ժամ և եռում է գործը: Գորգոսում են մեքենաները, բոլոր անկիւններում շարժում, վազվզում են վարպետները և մի օրւան ընթացքում վերջացնում են միլիոնների արժէք ունեցող ապրանքներ: Եւ այդպէս ամեն օր՝ շատ տարիների ընթացքում: Աշխատում են միլիոնաւորներ, որպէսզի իրանց աշխատանքով հարստացնեն ուրիշներին, այն է այդ Փարբիկանների, գործարանների, երկաթուղու, ևայլն տէրերին: Աշխատում են, որովհետեւ հարկաւոր է ապրել հարկաւոր է կերակրել իրան, կնոջը և երեխաններին: Ուստի ակամայից բանտրների գլխում յղանում է մի հարց՝ որտեղ է ճշմարտութիւնը. ինչո՞ւ բանտրը պէտք է աշխատէ, իսկ նրա աշխատանքի արդիւնքը վայելէ ուրիշը. ինչո՞ւ պէտք է բանտրը եղան նման աշխատի և միենոյն ժամանակ կիսաքաղցած կեանքով ապրի ու յաւիտեան գտնուի անգործ մնալու երկիւղի մէջ. ինչո՞ւ նա պէտք է ապրի որևէ անկիւնում, իսկ նրա աշխատանքի արդիւնքը

վայելողը պալատներում. ինչու նա իր երեսներին պէտք է ամենաջնջն ուսումն տայ. ինչու նա և իր երեխաները չեն կարող օդուել գիտութեան և գեղարեստի բոլոր հնարագիտութիւններից: Ինչու նա չի կարողանում կարդալ ինչպէս հարկն է. ինչու նա պետական կեանքում ոչ մի մասնակցութիւն չունի. ինչու քաղաքային գումաներում, գեմատվոններում ձայն չունի. մի խօսքով՝ ինչու նա չի կարող ինչպէս հարկն է ապրել, կերակրւել, սովորել, զւարճանալ, իր միտքը զարգացնել, այլ միայն պիտի հպատակւի: Երկար պէտք է այս այսպէս լինի: Մի գուցէ յաւիտեան: Իսկ եթէ ոչ, ուրեմն որտեղ է սրա ելակէտը, որտեղ է այն ճանապարհը, որ տանում է գէպի լաւ, գէպի լուսաւոր կեանք, որտեղ բանտորը ևս կարող է զգալ իրան բնութեան թագաւոր և ոչ թէ նրա սուրուկը:

Այս ճանապարհը

Յոյսը Աստուծոյ վրայ: շատերն են ցոյց տալիս բանտորին: Միքանիսը նիման իստում վրայ, հպատակւել ճակատագրին, խըթանի դէմ աքացի չտալ: Մարդիկ կը լաւանան, արդարադատ կը դառնան և կը կսեկն մարդավայել կերպով վերաբերւել դէպի նրանց—բանտորները:

Սակայն մարդիկ երբ պէտք է լաւանան: Ո՞վ կարող է երաշխաւորել այդ բանին: Առնա արդէն 2000 տարի է, ինչ Քրիստոսը կատակեց՝ սիրել մերժաւորին, և նոյնիսկ դեռ

մինչև Քրիստոսը ուրիշները ևս քարոզում էին՝ չցանկալ մերձաւորիդ այն, ինչ որ չես ցանկանում քեզ համար. բայց և այնպէս մարդիկ առաջւայ նման պատրաստ են մի կտոր հացի համար միմեանց ուտել: Կան շաա լաւ մարդիկ նաև կապիտալիստների մէջ, սակայն բանտորները դրանցից շատ քիչ օգուտ ունեն: Գուցէ միքիչ լաւ բնակարան են տալիս, զործը միքիչ լաւ պայմանների մէջ է լինում դրւած, բայց չէ որ մնացածը մնում է առաջւայ պէս, ինչպէս որ ամեն տեղ՝ վաս տէրերի մօտ:

Միքանիսն էլ բանակուր տէրութեան վրայ: տորներին խորհուրդ են տալիս կառավարութիւնից սպասել օգնութիւն:

Իր թէ կառավարութիւնը իր օրէնքներով կը պաշտպանէ բանտորներին, որպէսպի նրանց չշահագործեն: Բայց չէ որ բանտորները ակնյայտնի կերպով տեսնում են, թէ ինչ է նրանց համար տէրութիւնը:

Առաջ դեռ պարզ չէր այդ և գտնուում էին յիմարներ, որոնք հաւատում էին կառավարութեանը և նրա ագէնտներին, Զուբարովներին, ևայն:

Այժմ իւր իւր բանտոր՝ մանաւանդ Պետական Դ ի ընտրութիւնների ժամանակ համար, , թէ որքան է հոգում կառավարութիւնը բանտորների շահերի համար: Եւ այդպէս է ոչ միայն մեր կառավարութիւնը, այլ բոլոր երկիրների կառավարութիւնները, որոնք զլիսաւորապէս պաշտպա-

նում են կապիտալիստներին: Եթէ բանւորները սկսում են ապստամբւել, շատ անգամ կանչում են զինւորներ՝ նրանց խաղաղացնելու համար:

Ի հարկէ չի կարելի մեր կողմերի խաղաղացնելու ձեւ համեմատել Արևմտեան Եւրոպայի խաղաղացման ձևի հետ, բայց և այնպէս Եւրոպական կառավարութիւնը ևս դժմում է զինւած ոյժի, եթէ կապիտալիստները հաց են տալիս:

Իսկ սմանք էլ խոր-

Յոյսը իրանց վրայ: Հուրդ են առաջի իրանց բանւորներին՝ ձեռք բերել իրանց ազատութիւնը, և դրա համար առաջարկում են զանազան միջոցներ: Այդպէս օրինակ՝ խորհուրդ են տալիս փոխադարձ օգնութեան գանձարաններ, սպառողական ընկերութիւններ հիմնել, պրօֆեսիոնալ միութիւններով միանալ և այն: Այս բոլորը շատ լաւ է, սակայն որքան տարի է արդէն, որ այդ բոլոր միութիւնները, կաստանները գոյութիւն ունեն, բայց տակաւին բանւորական հարցը լուծւած չէ: Ճիշտ է, որ տեղադրել բանւորները աւելի լաւ են ապրում, աւելի լաւ են կերակրուում, օգնում են միմիանց, տեղադրել նրանք աշխատանքի պայմանները բարելաւել են, բայց և այնպէս գեռ շատ բան է պակաս, որ բանւորն ապրի մարդագագրի: Բանւորական հարցի հիմքը մնում է նոյնը. միենոյն անհրաժեշտութիւնը՝ աշխատել ուրիշի համար, նոյն անհրաժեշտութիւնը՝ ծախելիր աշխատանքը և ապրել անգործ

մնալու երկիւղի մէջ: Ամենագլխաւորն այն է որ չի երևում, թէ այդ պրօֆեսիոնալ միութիւնները ինչպէս պէտք է կարողանան վերջ տալ բանւորական հարցի չարիքին: Եթէ մենք նոյնիսկ մի բոպէ ենթադրենք թէ պրօֆեսիոնալ շարժումը շամբուժեղ կերպով զարգանայ, արդեօք կարող է նա ոչնչացնել անգործութիւնը: Արդեօք կարող է նա ոչնչացնել վարձու աշխատանքի անհաճելլի լինելը:

Անգլիայում, որտեղ պրօֆեսիոնալ միութիւնները շատ մեծ ոյժ են, անգործութիւնը շատ մեծ չափերի է հասնում: Անգլիական բանւորները վաղուց է, որ միացել են հաստատուն պրօֆեսիոնալ միութիւններով և իրանց դարաւոր կուից յետոյ եկել են այն եղրակացութեան, թէ բաւական չին միայն պրօֆեսիոնալ միութիւնները՝ հիմնարարապէս բարելաւելու իրանց դրութիւնը. Նրանք վճռեցին պարլամենտում կազմել իրանց սեպհական կուսակցութիւնը՝ իրանց շահերը պաշտպանելու համար: Նրանք վերջապէս լսեցին այն ձայներին, որոնք խորհուրդ էին տալիս բանւորներին զատել՝ կազմելով սեպհական քաղաքական կուսակցութիւն՝ կապիտալիստական կազմի դէմ կուելու համար:

Այդ ձայները դուրս Սօցիալ-Դեմոկրատ, են գալիս Սօցիալ-Դեմոկրակցութիւնները: մօկրատներից: Նրանք առում են՝ բանւորական վիշտը ոչնչանելու համար միայն մի ելք կայ,

այն է՝ որ փոխւի ամրողջ կազմը։ Նրանք ասում են՝ անբողջ չարիքը նրա մէջ է կայշանում, որ ներկայ կազմը կապիտալիստական է... այսինքն՝ արդարութեան բոլոր միջոցները պատկանում են ոչ թէ աշխատաւորներին, այլ նրանց, ով հնար ունի ձեռք բերել այդ միջոցները և բանւորներ վարձեր Քանի որ այդ գոյութիւն ունի, չի կարելի ուղղել չարիքը։ Եւ միմիայն ոչնչացնելով կապիտալիստական կազմը, կարելի է ստեղծել կեանքի այնպիսի պայմաններ, որտեղ բանւորը լինի լիազօր տէր, ինչպէս և ամեն մի ուրիշ քաղաքացի։ Սօցիալ-դեմոկրատները ասում են, որ կապիտալիստական կազմը պէտք է փոխարինել սօցիալական կազմով, այսինքն՝ այնպիսի կազմով, որտեղ արդարութեան բոլոր միջոցները—մեքենաները, հանքերը, հողը և այլն պատկանէին ոչ թէ առանձին սեպհականնատէրերին, այլ ամբողջ ժողովրդին։ Ինքը ժողովուրդը զեկավարէր արդարութիւնը և ոչ թէ Փարբիկանտների մի խմբակ։ Սօցիալ-դեմոկրատներն ասում են, որ այդ նպատակին հասնելու հտմար անհրաժեշտ է, որ բոլոր երկիրների բանւորները միանան և կազմեն մի միջազգային ս.-դ. կուսակցութիւն՝ վճռելու բանւորական հարցը։

Ինչո՞ւ են այդպէս հաւատացած Սօցիալ-դեմոկրատները. որովհետեւ, ասում են նրանք՝ ուսումնասիրելով կեանքը, կապիտալիստական կազմը, ակամայից տեսնում ենք, թէ նա ինչպէս պէտք է ոչնչանայ և ինչպէս բան-

տըները ստիպում են ձգտելու այդ բանին։ Հիմա ահանհնք թէ իրան այդպէս է այդ։

Գլ. II

Ներկայ հասարակության կապիտալիստ թեան կազմը կոչում է տական կազմը։ կապիտալիստական կամ բուրժուական, որովհետեւ արդինաբերութեան կապիտալիստ եղանակը իր գրոշմը գնում է ամրողջ կեանքի վրայ. արտադրութեան այդ եղանակի էութիւնը կայանում է նրանում, որ մեր գոյութեան համար բոլոր հարկանոր իրերը պատրաստում ենք ոչ թէ մենք ինքներս, այլ վարձու բանւորների ամրողջ մի բանակ։ Այդ բանւորները պատրաստում են ապրանքները ոչ իրանց գործիքներով, ոչ իրանց տանը, այլ ֆարբիկաներում, գործարաններում, և այդ ֆարբիկաները. գործարանները, զրա հետ մեքենաները և հումքներով պատկանում են կապիտալիստ տիրոջը։ Ոչթէ ստրուկները կամ ճորտերն են առաջւայ պէս պատրաստում ապրանքը, այլ օրէնքով պատ վարձու բանւորները։ Այն ամենը՝ ինչ որ մշակում է բանւորների ձեռքով, ընկնում է նախաձեռնող տիրոջ ձեռքը։ Բանւորին է պատկանում միայն աշխատանքը և աշխատանքի վարձը, իսկ կապիտալիստ տիրոջը արտադրութեան միջոցները և յաւելեալը։ Ճիշտ է, որ ներկայում էլ քիչ չէ տնական տնայնագործութեան արտադրութիւնը, բայց խոշոր ար-

կատարւում էր ձեռքով։ Այն ինչ որ առաջ մանրակրկիտ կերպով պատրաստում էին ձեռքով, այժմս այդ բոլորը արտադրում է մեքենաներով։ Ձեռքով բոլորովին ձեռնտու չէ ապրանքներ պատրաստելը։ Խնչպէս ասցինք, գիւղերում նոյնիսկ աւելի ձեռնտու էր գնել չիթը և թէ ուրիշ բաները, քան թէ իրանք գործէին։ Խոշոր արդիւնաբերութիւնը ամեն աեղից դուրս քեց փոքրը։ Այժմս ովզ չգիտէ շոգէգութանը, հնձելու մեքենան, կալիչը և այլն։ Երբ մեքենաները երեան եկան, նրանք դուրս վանեցին մարդկային աշխատանքը, բայց միւս կողմից մեքենաները կանանց և երեխաներին դամար։ Արդիւնաբերութիւնը աշխատելու համար։ Ամերիկայի մի քանի քաղաքներում կանացի աշխատանքը այնչափ դուրս մղել տղամարդկանց, որ այս վերջինները մնում են տանը երեխաներին նայելու և ճաշ պատրաստելու համար։ Մեքենական ծեր դուրս է վանում ձեռքի աշխատանքը, խոշոր արդիւնաբերութիւնը՝ բնական աշխատանքը, ամեն առ այս վերջինները մնում են տանը երեխաներին նայելու և ճաշ պատրաստելու համար։ Մեքենական ծեր դուրս է վանում ձեռքի աշխատանքը արտադրութիւնը և ամրող արտադրութիւնը կրում էր արհեստաւորապելութիւնը կամ աշխատանքը կամ ամրող արտադրութիւնը... Գիւղերում ամեն ինչ կան բնաւորութիւն... Գիւղերում ամեն ինչ պատրաստում էին տանը։ Երբ մեքենաներու աշխատանքը մղեցին ընկնել։ Օրինակի համար՝ Բիլկայում կային մինչև 60,000 աշխատող ջուհակներ։ Այժմս հազիւ մինին 10,000, խոշոր արտադրութիւնը

ըանքների այնպիսի մեծ քանակութիւնն, որի մասին առաջնորդների չէին էլ երազում։ Բանտորի արտադրութիւնը բարձրացաւ։ Մեծ չափով մեքենաները յեղաշրջում առաջ բերեն մարդկանց յարակցութիւնների մէջ, երեան եկան շոգենաւեր, երկաթուղիններ և այլն։ Շնորհիւ այդ յեղաշրջման կարողանում են ապրանքներ տեղափոխել աշխարհիս բոլոր անկիմները։ Մեքենան մուտք գործեց գիւղերը։ Այժմս ովզ չգիտէ շոգէգութանը, հնձելու մեքենան, կալիչը և այլն։ Երբ մեքենաները երեան եկան, նրանք դուրս վանեցին մարդկային աշխատանքը, բայց միւս կողմից մեքենաները կանանց և երեխաներին դամար։ Ամերիկայի մի քանի քաղաքներում կանացի աշխատանքը այնչափ դուրս մղել տղամարդկանց, որ այս վերջինները մնում են տանը երեխաներին նայելու և ճաշ պատրաստելու համար։ Մեքենական ծեր դուրս է վանում ձեռքի աշխատանքը կրում էր արհեստաւորապելութիւնը կամ աշխատանքը ամրող արտադրութիւնը կամ ամրող արտադրութիւնը կամ ամրող արտադրութիւնը... Գիւղերում ամեն ինչ պատրաստում էին տանը։ Երբ մեքենաներու աշխատանքը մղեցին ընկնել։ Օրինակի համար՝ Բիլկայում կային մինչև 60,000 աշխատող ջուհակներ։ Այժմս հազիւ մինին 10,000, խոշոր արտադրութիւնը

արդիւնաբերութիւնը գեռ չի ոչնչացել, բայց
ընդունել է տասյին արտադրութեան սոս-
կակ ձև: Առաջին հայեացքից կարծես թէ
արհեստական արտադրութիւն է, բայց ի-
րօք այդ աշխատանք է տիրոջ համար:
Իրականապէս արհեստաւորը ինքն է տէրը:
Անզլիայում և Ամերիկայում մի քանի ֆար-
բիկաներ դուրս պատրաստել են տալիս
հագուստեղին ձեռքով:


Հազարաւոր դերձակներ աշխատում են
չարաչար ողորմելի վարձի համար: Տէրը
քամում է նրանց քրատինքը: Աշխատանքի
այս ձեր անւանում է քրանսքամ սիստեմ:

Արհեստաւորների վիճակը կարելի է հա-
մեմատել այն թուփերի հետ, որոնք բու-
նում են հակայ ծառերի մէջ: Ծառերը խոր
արմատներ են զցում հողում, զրկում թու-
փը հիւթից և իրանց վիթխարի ճիւղերով
ծածկում են թուփին արեից: Թուփը նւա-
զում է և սպասում է խսպառ ոչնչացման:
Ինքնորոյն մանր տնտեսութիւնը դուրս է
մղում նաև գիւղատնտեսութեան շրջանից:

Անցան այն ժամանակները, երբ գիւղա-
ցին ապրում էր ուրախ-զւարթ, պատրաս-
տելով իրա համար հարկաւոր պիտոյքները:
Խոշոր արտադրութիւնը մուտք է գործել
նաև գիւղերը: Անզլիայում զրեթէ անհե-
տացել է մանր հողատէր գիւղացին. ամբողջ
հողը պատկանում է միքանի հազար խոշոր
սեհականատէրերի: Բայց կար ժամանակ,
երբ Անզլիայում ծաղկում էր մանր գիւղա-
ցիական տնտեսութիւնը: Թէ Ֆրանսիայում

և թէ Գերմանիայում զարգանում է հետզհետէ
խոշոր հողային սեպհականատիրութիւնը:
Ֆրանսիայում, օրինակի համար՝ գիւղացու
սեպհականութիւնը, այսինքն այն հողերը, որ
մշակում են գիւղացիները, կազմում է ոչ աւե-
լի, քան ամբողջ հողի կէսը: Ամերիկայում
գիւղատնտեսութեան մէջ գործածած մնեքենա-
ների ամբողջ արժողութիւնը հաշուում են
մինչև 1,500 միլիոն ո., նոյնը կատարում է
այստեղ՝ Ռուսաստանում: Հարաւում ահա-
զին ագարակներ են գտնուում, որտեղ հա-
րիւրաւոր գիւղացի մշակներ են աշխատում:

Տամնեակ հազարաւոր մնանկացած գիւ-
ղացիների հողերը պատկանում են մի որևէ
վաճառականի: Սամարսէի նահանգում 10—
15 հազար գեսեատին վարելահողեր կան:
Խերսոնի նահանգի հինգ գաւառներում կան
405 հողատէրեր 1—2 և կէս հազար գեսեատին
վարելահող ունեցող և որոնցից մի քանիսը
226 դես. գեռ աւելի հողեր ունեն: Անան-
կացած գիւղացին կամ գնում է քաղաք, կամ
վարձով բանում է իրրե մշակ մի որևէ վա-
ճառականի կամ քաղաքից եկած աղայի մօս:
Կապիտալիստները մրցում են իրար հետ:
Կապիտալիստական կազմը ոչնչացնելով
մանը արտադրութիւնը, համսում է մի այն-
պիսի դրութեան, որտեղ կապիտալիստները
կուր են մկանում միմեանց հետ: Փոքրիկ կա-
պիտալիստական ձեռնարկութիւնների ոչն-
չացման մասին, որ ունեն մի քանի բան-
տոր, նոյնիսկ խօսք անդամ չի կարող լինել:
Դրականապէս կամուկ առաջ որ փոքրիկ կա-



պիտակիստական անտեսութիւնները ամեն
տեղ ընկնում են: Այստեղ՝ ուր ազգաբնակու-
թեան ցուցակագրութիւն կայ, թւերից երե-
սում է, թէ ինչ չափերի է հասնում այդ:
Այսպէս՝ 1882 թ. Գերմանիայում արդիւնա-
բերող ազգաբնակութեան մի երկուբրորդ
մասն էին կազմում փոքրիկ ձեռնարկութիւն-
ները, իսկ 1895 թ. նրա կիսից պակաս: Իսկ
եթէ կան շատ մասը ձեռնարկութիւններ,
դրանք կազմում են որևէ խոշոր ձեռնարկու-
թեան մի մասը: Օրինակի համար՝ կարծես
թէ դեռ ևս շատ կան փոքրիկ ճաշարաններ.
արականեր, զամբիւլ հիւսող, գլխարկ
կարող, խաղալիքներ և թէ ուրիշ բաներ
շինող վարպետներ, բայց իրօք գոր-
ծը բոլորովին այդպէս չէ: Լոնդոնում կան
շատ էժանագին ճաշարաններ, բայց դրանք
բոլորն էլ գտնուում են 4—5 նախաձեռնողների
ձեռքում: Նոյնը մենք նկատում են ծխախո-
տի, կաթնատների և ուրիշ խանութների
վերաբերմամբ:

<p>Եթէ մասը նախաձեռ- նոշոր նախաձեռնու- մելինների մէջ նոյնակէն մրցումն կայ:</p>	<p>Եթէ մասը նախաձեռ- նութիւններն ընկնում են խոշորների ճնշման տակ, այդ դէպքում խո- շորների մէջ առաջ է դա- լիս մրցումն: Գաղափար կազմելու համար, թէ ինչ ծաւաների կարող է հասնել այդ մըս- ցումը, ես մի օրինակ կը բերեմ: Ամերիկացի կապիտալիստ Ռեկբլէրը, որին նաւթային թագաւոր են անւանում, հանքեր ձեռք բե- րաւ մի լճի մօտ: Նրան հարկաւոր էր այդ-</p>
--	---

տեղից գուրս քշել իր հարևան մրցակից-
ներին: Երբ սրանք մրցմանը չէին դիմա-
նում, նա չնչին գնով առնում էր նրանց
հանքերը: Իսկ եթէ նրանք երկար ժամանակ
էին դիմանում, այդ դէպքում նա սկսում էր
ծախել իր հանքերը՝ շուկայում եղած գներից
աւելի էժան՝ նրանց համար կործանիչ չափե-
րով: Նա գիտակցօրէն վկասներ էր կրում, ո-
րովհետև զրամագլխի տէր էր, մինչդեռ միւս-
ները քայլքայլում էին: Կապիտալիստների մէջ
ինչպէս տեսնում էք, առաջ է գալիս անխնայ
մրցումն:

Բանն այն է որ գործա-
կը կիսներ — բանատէրը, երբ ապրանքներ
ծգնաժամեր: Է պատրաստում, չգիտէ ար-
դեօք լաւ կը ծախւի՞
թէ ոչ քանի որ միւս ֆարբիկանտ-
ներն էլ են պատրաստում նոյն ապ-
րանքներից: Թէ որքան սպառողներ կը
լինեն, նրանցից ոչ ոք չգիտէ: Այս հան-
գամանքն աչքի առաջ ունենալով, իւրա-
քանչիւր կապիտալիստ աշխատում է, որ
իր ապրանքը, որքան կարելի է, էժաննստի:
եթէ շուկայում լոյս ընկնեն մրցակիցներ,
նա կիջեցնէ գինը: Ով որ կարողանայ աւե-
լի էժան ծախել, նա էլ աւելի ապահովուած
կը լինի, որ իր ապրանքները կը ծախւեն նոյն-
իսկ այն դէպքում, երբ սպառողները աւելի
քիչ լինեն, քան որ հարկաւոր էր բոլոր ապ-
րանքներն առնելու համար: Սա աւելի ար-
տայայտում է այն ժամանակ, երբ մի նոր
շուկայ է բացւում, կամ մի որևէ ապրանքի

համար մեծ պահանջ է զգացւում: Ամենքը ևս
աշխատում են օգտել հանգամանքից: Ապ-
րանքներ բերում են շուկայ աւելի շատ, քան
հարկաւոր է: Սկսում է սոսկավ մրցումն,
որի հետևանքը լինում է շատ կապիտալիստ-
ների սնանկութիւնը: Փակւում են մի շարք
ֆարբիկաներ, բանորդներն արձակում են,
վրայ է համում անգործութիւնը: Որպէս զի
հասկանալի լինի, թէ ինչպիսի սնանկութիւն
են առաջ բերում կրիզիսները, պէտք է միայն
երևակայի, թէ ինչպէս հարիւրաւոր կապի-
տալիստներ կամ նրանց հաւատարմատար-
ները հաւաքում են շուկայ և նրանցից ա-
մեն մէկը յոյս ունի որպան կարելի է, շուտ
ծախելու իր ապրանքը, որպէսզի վճարէ
պարտքերի մի մասը կամ նոր նիւթեր գնէ
յետագայ արտադրութեան համար: Եթէ մի
որևէ կապիտալիստ յօդս է ցնդում, ոչ միայն
ինքն է ոչնչանում, այլ և նրա հետ միասին
կապւած բոլոր անձինք՝ նրա պարտատէ-
րերը և թէ նրանք, որոնք հում նիւթ էին
մատակարարում: Սա էլ իր հերթին դադա-
րում է այս կամ այն ֆարբիկանտի յաճա-
խորդը լինելուց: Եւ այսպէս տուժում է նաև
այդ ֆարբիկանտը: Կրիզիսը անդրադառնում
է մի շարք մարդկանց, մի շարք արտադրու-
թիւնների վրայ: Այդ սնանկութիւնները—
կրիզիսները կապիտալիստական արտադրու-
թեան եղանակի շնորհիւ դարձել են ան-
խուսափելի:

—

Կապիտալիստական միու- Շնորիւ այդ կրի-
թիւններ, տրեստներ, սին- գիսների առաջ է
դիկատներ և այլն: գալիս մեծ կապի-
տալներ ունենալու

անհրաժեշտութիւնը. այս ճանապարհով կա-
րելի է աւելի ապահովել մրցակիցների հետ
մրցումն և թէ իր օգուտը: Մի կապիտալիստի
դժւար է շատ մեծ կապիտալ ունենալ և սրա
համար կապիտալիստները սկսում են կապւել
միութիւններով. նրանք կազմում են ակցիո-
ներական ընկերութիւններ, արտէներ, սին-
դիկատներ և տրեստներ: Դրանք բոլորն էլ
կապիտալիստների զանազան տեսակի միւ-
թիւններ են:

Դրանց ամենաբարձր աստիճանը—տրեստ-
ներն են: Այդտեղ կապիտալիստներն աշխա-
տում են միացնել ոչ թէ միայն արդիւնաբե-
րութիւնը, այլ և առևտուրը: Այդ տեսակի ա-
մեն մի միութիւն կը ցանկար գրաւել իր հա-
մար մի առանձնացած գիրք և գառնալ ար-
դիւնաբերութեան որևէ մասնաճիւղի միակ
տէրը, որպէսզի հաւատացած լինի, թէ շուկա-
յում ոչ ոք չի համարձակւիլ մրցելու իր հետ:
Այդ միութիւնները շատ թէ քիչ միացնում են
խոշոր արդիւնաբերողներին, բայց միևնուն
ժամանակ միանգամայն դուրս են վանում
մանր արտադրութիւնը: Ամերիկայում նաւ-
թային արեստը իր ձեռքի տակ ունի բոլոր
նաւթանցքերը, որոնք միացնում են նաւթային
պլրօմիլանների շրջանները նաւթազտիչ դոր-
ծարանների հետ: Այդ տրեստը յարաբերու-
թեան մէջ մտաւ Գալիցիայի և Կովկասի նաւ-
թարդիւնաբերողների հետ և հիմա այդ տրես-
տը ամբողջ Եւրոպային և Ամերիկային նաւթ

է մատակարարում: Ո՞րքան մեծ քանակութեամբ անկախ արդիւնաբերողներ պէտք է անհետանային ասպարէզից: Օրինակ 60—70 թւականներին տասնեակ հազարներով կապիտալիստներ նաւթ էին քաշում Պենսիլվանիան շաղրւանից, այն ինչ հիմա 10—15 հոգուց կազմած մի խումբ մարդիկ տէր են ամբողջ նաւթային գործին: Ֆրանսիացի սոցիալ-դեմօկրատ Լաֆարգը հաշւել է թէ որքան անկախ արդիւնաբերողներ է ո՞նչ ացրել ծխախոտի տրեստը: Երեսում է, որ մի քանի տարւան ընթացքում նա դուրս է շպըրտել 2700 սիգարի, 3000 ծխախոտի ֆարբիկաներ և 60,000 խանութպաններ: Շաքարի տրեստը Ամերիկայում մատակարարում է ամբողջ երկրին շաքար, այն ինչ 1880 թ. 49 առանձին շաքարի ֆիրմաներ կային:

Սակայն այդ բոլոր խորեստները յեն կարող շոր տրեստները, անոչնչացնել մրցումը: Կարող են վերացնել կրիզիսները:

Որպէսզի նրանք կարողանային այդ անհետու, պէտք է լաւ տեղեկութիւններ ունենան շուակայից: Որոշ չափով հնարաւոր կը լինէր, կատարելու առաջն առնել, եթէ այդ արտակրիզների առաջն առնել, եթէ այդ արտադրութեան նախաձեռնողները բոլոր կապիտալիստական երկիրներում միանային: Այդպիսի տրեստներ մեզ մօտ դեռ ևս չկան: Նրանց կազմակերպել շատ դժւար է: Նոյնիսկ եթէ նրանք կազմակերւեն էր, այդ դէպքում ևս տրեստները չեն ազատիլ հասարակութեանը կրիզիսներից: Ճիշտ է

մի որևէ արդիւնաբերութեան մասնաճիւղի նախաձեռնողների մէջ մրցումը ոչնչանում է, բայց այս բանը ի՞նչպէս կարտայայտուի արդիւնաբերութիւն միւս մասնաճիւղերի նախաձեռնողների վրայ, որոնք դեռ ևս կարիք ունեն տրեստի: Ենթադրենք թէ կազմւեց միջազգային տրեստ՝ պղնձի հանքեր մշակելու համար: Այս բանը ի՞նչ հետևանք կը թողնէ այն արդիւնաբերողների վրայ, որոնք մշակում են պղնձ: Ամենից առաջ պղնձի տրեստը աւելի քիչ հանք պէտք է արդիւնաբերէ, քան եթէ այդ տրեստի բոլոր ինքնուրոյն կապիտալիստները արդիւնաբերէին առանձին-առանձին: Որովհետեւ արեստը չի վախենում մրցումից: Նա աւելի լաւ է համարում քիչ արդիւնաբերել և թանգ ծախել: Պղնձէ առարկաներ արտադրողների շահերը պահանջում են, որ գները աւելի ցածր լինէին. ուստի նրանք կաշխատէին ամեն կերպ, որ պղնձի տրեստը ուժեղացնէ արտադրութիւնը: Եթէ տրեստը այդ չանէր, այդ դէպքում շատերը կաշխատէին փակել ծամանակաւորապէս իրանց նախաձեռնութիւնը. մի քանիսը պըղինձը կը փոխարինէին որևէ ուրիշ հանքով, իսկ միւսները կը սկսէին իրանք ձեռք բերել հանքեր և արդպիսով պղնձէ արտէլը կոչնչանար և կրիզիսն անխուսափելի կը դառնար: Միայն այն դէպքում, եթը անբողջ աշխարհի տրեստները միանային և մի ընդհանուր տրեստ կազմէին, այդպիսով ի հարկէ կրիզիսների առաջը կառնէին:

Կապիտալիստական
Արտադրութեան կենդան միութիւնների գարգա-
րոնացումը: ցումն կենդրոնացնում
է արտադրութիւնը մի
քանիսի ձեռքում: Մօտիկից դիտելով կա-
պիտակամի զարգացումը, տեսնում ենք որ
այդ զարգացումը նպաստում է մանր և
միջին կապիտալիստական նախաձեռնողնե-
րի քչանալուն և խոշոր ձեռնարկութիւննե-
րի ծաւալը լայնացնելուն: Օրինակի համար՝
Ֆրանսիայում 1866 թ. 1,450,223 հիմնար-
կութիւն կար՝ 4,715005 բանտորով.
1896 թ. 7,340240 հիմնարկութիւն
6,313,239 բանտորով:
Մասնաւրապէս մետաղագործական ար-
դիւնաբերութեան մէջ
1866 թ. 1,786 գործարան կար.
1896 թ. 471 „ „
Խոշոր գործարանական արդիւնաբերու-
թիւնը 1882 թ. Գերմանիայում արտա-
դրում էր բոլոր մթերքների կէսը, իսկ 1894 թ.
այսինքն 13 տարի յետոյ արդէն արտա-
դրում էր այդ քանակութեան աւելի քան եր-
կու երրորդ մասը: Մասը նախաձեռնութիւն-
ների թիւը 1882 թից մինչև 1895 Գեր-
մանիայում աճեց աւելի պակաս, քան 2 տո-
կոս. իսկ նախաձեռնութիւնների ընդհա-
նուր թիւը 46 տոկոսով: Դրանց թւում
շատ խոշորները (1,000 մարդուց աւելի)
շատ խոշորները (1,000 մարդուց աւելի)
աճեցին 100 տոկոս: Կապիտալի կենդրոնա-
նալը մի քանի ձեռքերում առանձնապէս
պարզ նկատում է Ամերիկայում: Այստեղ,

օրինակի համար՝ բոլոր հեռագրատները
գտնուում են 2 ընկերութիւնների ձեռքում:
Պողպատի տրեսուը 15 միլիարդ ոռւբլի ու-
նի: (Նրանում աշխատում են 168,000-ից
աւելի բանտոր): 1902 թ. զուտ արդիւնքն
աւելի էր, քան 500 միլ. ոռւբլի: Նա ունի
տասնեակ հազարաւոր վերստերի վրայ եր-
կաթուղի, հանքերի և քարածուխի ահազին
շերտեր, ահազին քանակութեամբ զավող-
ներ և ֆարբիկաներ: Զորս հոգի իրանց
ձեռքում են պահում ամբողջ Ամերիկայի
մսի առևտուրը: Ամերիկայում մինչև 1903
թ. յուն. 1-ը 793 տրեստ կար՝ 200 մի-
լիարդ կապիտալով: Որպէսզի կարելի լինի
գաղափար կազմել այդ գումարի չափի մե-
ծութեան մասին, ես կաւելացնեմ, որ Միա-
ցեալ-Նահանգների ամբողջ հարստութիւնը
մօտաւրապէս գնահատուում է 900 մի-
լիարդ:

Մի փոքրիկ ֆինանսիստների խմբին է
պատկանում հարիւրաւոր միլիարդները: Հիւ-
սիսային Ամերիկայի բոլոր գիւղական և
արդիւնաբերական արտադրութիւնները նը-
րան հարկ են վճարում: Այդ տրեստները
ոչ միայն հիւսիսային Ամերիկայումն են,
այլ և բոլոր պետութիւնների մէջ: Նոյնիսկ
մեզանում նուսաստանում, որ ուրիշներից
աւելի ուշ զարձաւ կապիտալիստական եր-
կիր, գոյութիւն ունին կապիտալիստների
մի քանի խոշոր ընկերութիւններ: Դրանք՝
շաքարի, նալթի, ապահովագրութեան սին-
դիկաներն են: Գոյութիւն ունեն լարաձկ

մեխերի և մի շաբք ուրիշ գործարանատէ-
տերի սխաղկատներ:

Արտադրութեան

Առևտրի կենդրոնացումը՝ կենդրոնացումը տե-
ղի ունի հչ միայն
մի քանի Փիրմաներում, այլ նոյն երևյ-
թը նկատում է նաև առևտրում: Սակայն բո-
լոր մեծ քաղաքներում այժմ պատահում
ենք մեծ-մեծ խանութիւնների, որտեղ աշխա-
տում են մինչև 2000 գործակատար: Մտէք
մի այդպիսի խանութ և դուք այնտեղ կը
գտնէք այն ամենը, ինչ որ հարկաւոր է՝
թէ առողջ և թէ հիւանդ մարդու համար:

Վերի ասածներից մենք

Զ-րդ գլխի սպառ- տեսնում ենք, որ կապի-
կացութիւնը: տալիստական կազմն սկսեց
նրանով, որ դուրս վա-

նեց ձեռքի մասը, ինքնուրոյն արտա-
դրողներին, յետոյ կապիտալիստների իրար
հետ ունեցած ներքին մրցման շնորհիւ
զարգանալով՝ ընդունեց խոշոր կապի-
տալիստական կերպեր և առաջ եկան սին-
դիկատներ և տրեստներ: Այդ վերջին-
ներն են որ կազմում են հասարակական
արտադրութեան ձեռքը: Սկզբում ամեն ոք
արտադրում էր ինքը անկախ. գիւղա-
ցին մշակում էր իր դաշտը, ջուրհակն
աշխատում էր իր ձեռքով շինած դաղդեա-
յի վրայ, զամբիւղագործը հիւսում էր
իր զամբիւղը, մանրավաճառը և այլն, զբանք
բոլորն էլ ինքնուրոյն սեպհականատէրեր
էին: Սեպհականատէրը ինքն անձամբ օգ-

տում է իր գործիքներով: Արտադրու-
թեան կապիտալիստական եղանակը անհա-
տական բնաւորութիւն չի կրում: Այդտեղ
աշխատում են համախմբւած: Մեքենաները
մարդկանց միացած աշխատանք են պա-
հանջում: Առաջ դեղկուհին պատրաստում
էր հագուստի համար նիւթեղին և կարում
էր ինքը: Իսկ հիմա նա գնում է քաղաք
և չիթ առնում, որ պատրաստել են հա-
րիւր կամ հազար միացած բանուրներ:
Այս արդէն հասարակական հաւաքական ար-
տադրութեան ձեն է: Առանձնապէս պարզ
կերպով այս գիծը նկատում է ակցիօնե-
րական տրեստների և նոյնանման ընկերու-
թիւնների մէջ: Եթէ կապիտալիզմի զար-
դացման առաջին շրջանում կային ուրոյն
կապիտալիստներ, որոնք տէր էին ֆաբրի-
կաների և զավօնների, այժմս նրանց տէ-
րերը ընկերութիւններն են. սեպհականու-
թիւնն ստացաւ ընկերակցական բնաւորու-
թիւն:

Գրքի վերջին զիսից մենք տեսանք նաև,
որ կապիտալիստները չեն կարող կառավա-
րել իրանց արտադրութեան միջոցները: Նը-
րանք չեն կարող իրանց հպատակեցնել
շուկան: Չնայած այն հանգամանքին որ կա-
պիտալիստները ամրող արդիւնաբերու-
թեան տէրն են, այնուամենայնիւ նրանց
վրայ իշխում է մի ինչ որ ոյժ և ստիպում
ընկնել շուկաները, ապրանքներ պատ-
րաստել պահանջից աւելի առանց տպա-
հոված լինելու, թէ կարող են ենթարկ-

ւել կրիպհների, սնանութիւնների: Ի՞նչ
ոյժ է այդ. անկասկած—ներկայ ժամանա-
կակից արտադրող միջոցներն են: Ար-
տադրութեան մեքենայական ձևը առաջ
բերաւ արտադրող ոյժերի չափազանց զար-
գացումն: Մի գիտնական հաշեել է, որ մե-
քենաները, որոնք գործում են ֆրանսիա-
յում, փոխարինում են 45,000,000 ստրուկի,
իսկ Անգլիայում—80 միլիոնի. և այս արտա-
դրութեան ոյժերը գտնում են կապիտա-
լիստների ձեռքին, իսկ դրանք չեն կարող
այնպէս իշխել այդ միջոցների վրայ, որ
ժողովուրդը բարեկեցիկ ապրէր:

ԳԼ. III.

Ժամանակակից կազմի ժամանակակից մե-
հակասումիւնը: Քենաներով կարելի է
պատրաստել այնքան
ապրանք, որ մարդկային բոլոր պահանջե-
րին կարելի լինէր բաւարարութիւն տալ. այ-
սինքն որ ամենքն էլ ունենան հագուստ, կօ-
շիկ, կուշտ լինին, կարողանան լաւ բնակա-
բաններում ապրել և այն: Իսկ միենոյն ժա-
մանակ կապիտալիզմի զարգացման հետ միա-
սին աճում է իւրաքանչիւր մարդու անապա-
հովութիւնը, աղքատութիւնը, վաղւան օրւայ
հոգսը. ահագին թւով բանսորեր ապրում են
ինչ որ անկիւններում, իսկ շատ անզամ
նոյնիսկ ուղղակի փողոցում: Կապիտալիզմի
զարգացման հետ միասին աճում է և ան-
գործութիւնը: Ներկայումս անգործները

կազմում են մեծ բանակ: Լոնդոնում ան-
գործների թիւը համարում է 300,000-ի, իսկ
վատ վարձով աշխատողների թիւը մինչև մէկ
միլիոնի: Փարիզում մի օրեայ՝ 28 մայիսի
1896 թ. ժողովրդագրութիւնը երևան հանեց
270,000 անգործ, իսկ Բելգիումը մի օ-
րեայ ազգաբնակութեան ցուցակը ելլ 1902
թ. տւալ 117,000: Նոյնիսկ կապիտալիստ-
րերից ոչ ոք չի կարող հաւատացած լինել,
թէ վաղը ինքը չի մնանկանալ: Երևան է
գալիս սոսկալի հակասութիւն: Մթերքներ
արտադրում են շատ աւելի, քան հարկաւոր
է, մինչդեռ շատ մարդիկ մեռնում են քաղ-
ցից. մարդիկ կարող էին լաւ ապրել իսկ
իրօք շատ քչերն են այդպէս ապրում:

Ո՞գ է մեղաւոր: Արտա-
դրութեան միջոցները
կակից արտադրու-
թեան եղանակը (այ-
կանութիւն:
սինքն մեքենայի խոշոր
արտադրութիւնը), թէ մի որևէ ուրիշ պատ-
ճառ կայ. սակայն ամենքի համար պարզ է թէ
գործը արտադրութեան եղանակի մէջ չէ, այլ
նրանում՝ որ արտադրութեան միջոցները
գտնում են առանձին անհատ-կապիտալիստ-
ների ձեռքում: Արտադրութեան միջոցները
լաւ են, վատը միայն այն է, որ նրանք
կազմում են մասնաւոր սեպհականութիւն:
Զէ որ այդ սեպհականութեան տէրը չի կա-
րող հոգալ հասարակութեան կամ ժողովրդի
համար: Դրա յետեկցը նկներով կապիտալիստը
ստիպուած է մտնել կուի մէջ: Եւ այդ պատ-

ճառով եթէ նոյնիսկ ցանկանար, չէր կարող շուկայի, հասարակութեան բարեգործը լինել: Ամեն կողմից նրա աշքին պէտք է երևային իր նմաննախածեռնողներ, որոնք պատրաստ են կլանել իրան:

Անհրաժեշտ է որ ար- Ժողովութել—ամբողջ տաղը միջոցները հա- հասարակութիւնը մի- սարակական սեպհակա- այն այն ժամանակ չէր նութիւն կազմէին: տուժիլ ժամանակակից արտադրութեան եղա- նակից, եթէ այդ արտադրութեան գործիք- ները—միջոցները գտնւէին իրա՞ հասա- րակութեան—ժողովրդի ձեռքում: Ի հար- կէ այդ է միակ ելքը: Բայց թնչպէս այդ անել և հիշ կարող է այդ ինդիրը լուծել: Այդ մեծ գործը բանտորները պէտք է իրա- գործեն Սօցիալ-Դեմօկրատիայի ղեկավարու- թեամբ: Սօցիալ-Դեմօկրատիան պէտք է կատարէ այդ մեծ յեղաշրջումը ամբողջ կազ- մի մէջ (սօցիալական յեղափոխութիւն): Այ- սինքն՝ բոլոր ֆարբիկաները, զավոդները, միքենաները և այլն պիտի յանձնէ ամբողջ հասարակութեան, կապիտալիստական պէ- տութիւնը դարձնէ ժողովրդական բանտո- րական թագաւորութիւն (սօցիալական): Սօ- ցիալ-Դեմօկրատիան արտադրութեան ոյժե- րը պէտք է յանձնէ հասարակութեան ձեռքը: Արտադրութեան միջոցները պէտք է պողջ ժողովրդին: Արտադրութիւնը պէտք է բողջ ժողովրդին: Արտադրութիւնը պէտք է կառավարեն ոչ մասնաւոր անձանց, այլ ամ- պատկանեն ոչ մասնաւոր անձանց, այլ ամ-

ամէրերի կառավարիչները, այլ հասարակու- թեան ներկայացուցիչները. աշխատանքը, ոչ թէ կապիտալիստների համար պէտք է լինի, այլ իրանց՝ ժողովրդի համար: Մարդկա- յին գլխաւոր կեանքի պահանջները՝ մնունդը՝ բնակարանը, հագուստը, հոգեկան պահանջ- ները, ևայլն, այդ բոլորը ներկայումս ան- հատական հոգացողութեան առարկաներն են, մասնաւոր գործ է: Կապիտալիստական հասարակութեան մէջ ամեն մէկը պէտք է հոգայ այս բոլորի համար: Մինչդեռ այն հասարակութեան մէջ, որտեղ արտադրու- թիւնը կը լինի ժողովրդի ձեռքով, այդ հոգա- ցողութիւնները կը դառնան հասարակական գործ: Սօցիալ-Դեմօկրատիան մարդկային բո- լոր յաղթութիւնները պէտք է դարձնէ ամբողջ ժողովրդի սեպհականութիւն, այլ ոչ թէ մի բուռն մարդկանց արտօնութիւն:

Ինչու այս միծ խըն- Այս կարող է անել զիբը կարող է իրագոր- ծիան պրօլետարիատը: Ճել միայն բանւոր դա- ստկարդը: Գուցէ այդ բանը կարողանար անել կառավարութիւ- նը, որի ձեռքում են կենցրանացած ներ- կայումս շատ խոշոր և կարևոր հասարակա- կան նախաձեռնութիւններ, լիչպէս օրինակ երկաթուղիները, փոստը, հեռադիրը. նրա ձեռքին են այժմս մի ամբողջ կըյտ պետա- կան զավոդների. նրա ձեռքին է օդիի, ծխա- խոտի և ուրիշ առարկաների մենավաճա- ռութիւնը: Շատերն ասում են, որ պետու- թիւնը աստիճանաբար իր ձեռքը կառնէ բո-

լոր արտադրութիւնը, կը միաւորէ նրանց և
այդպիսով կը դարձնէ հասարակական։ Սա-
կայն ուղիղ չէ այդ ենթադրութիւնը։ Ժամա-
նակակից պետութիւնը ինքը ոչ այլ ինչ է,
բայց եթէ մի խոշոր կապիտալիստական նա-
խաձեռնող։ Նրա ամբողջ արտադրութիւնը
հիմնած է նոյնպէս վարձու բանուրների աշ-
խատանքի վրայ։ Երկաթուղիների, հեռա-
գիրների, փոստի և այլ հաստատութիւն-
րի մէջ նոյնպիսի հարստահարութիւն է տի-
րում, ինչպէս և ֆարբիկաներում, գուցէ և
աւելի վատ։ Բաւական չէ միայն այն, որ
կառավարութեան ձեռքն անցնի ամբողջ
արդիւնաբերութիւնը, այլ պէտք է որ նրա և
բանուրի միջև եղած յարաբերութիւնը փոխի,
այսինքն՝ որ նա ձեռք գցելով անբողջ արտա-
դրութիւնը, պէտք է դարձնէ այդ՝ աշխատա-
ւորների և անբողջ հասարակութեան սեպհա-
կանութիւն։ Կարող է արդեօք այդպէս վարւել
ժամանակակից պետական իշխանութիւնը։ Ոչ
չի կարող, որովհետեւ ժամանակակից պետու-
թեան մէջ իշխում են ունեւոր գասակարգերը,
այսինքն արտադրութեան միջոցների տէրե-
րը։ Պարլամենտների կազմը բանուրնե-
րը ներկայացուցիչների փոքրամասնութիւն-
ը է կազմում, չնայած որ նրան ընտրում է
ժողովրդի մեծամասնութիւնը։ Ամենից առաջ
պետութիւնը պահպանում է ունեւոր դասա-
պետութիւնը պահպանում է ունեւոր դասա-
պետութիւնը կարող շահերը։ Բոլոր երկիրներում, որտեղ
կարգի շահերը, բանական յուղմունք են տեղի ունենում,
բանուրական յուղմունք են տեղի ունենում,
պետութիւնն իսկոյն իր ծառայութիւններն
է առաջարկում կապիտալիստներին։ Եթէ

կառավարութիւնը զլիսաւորապէս հոգար չու-
նեւորների համար, այն ժամանակ նա հա-
րուսաների ուսերից հարկերը չէր վերցնիլ
ու դնիլ ազգատ ժողովրդի ուսերի վրայ, չէր
աշխատիլ կրծատել բանուրների իրաւունք-
ները։

Այդ բոլորից պարզ երեսում է, որ պետու-
թիւնը իր նախաձեռնութիւններով շատ էլ
հեռու չի գնալ, որպէսզի չմնասէ մասնաւոր
կապիտալին և պահանջէ մասնաւոր սեպա-
հականութեան ոչնչացումը արտադրութեան
միջոցների համար։ Երբ Սօցիալ-դեմոկրատ-
ները պետութեան մէջ տիրապետող տեղը
կը բռնեն, ահա այն ժամանակ նա կը դա-
դարէ կապիտալիստական նախաձեռնութիւն-
նինելուց, այս, այն ժամանակ միայն տէ-
րութիւնը կը կանգնէ մասնաւոր սեպհակա-
նութեան դէմ արտադրութեան միջոցների
նկատմամբ։ Այժմս այդ չկայ և հէնց այդ պատ-
ճառով էլ ժամանակակից պետութեան վրայ
չի կարելի յոյս գնել, թէ նա կը կուի կապի-
տալիստական կազմի դէմ։

Գուցէ իրանք կապիտալիստները կարո-
ղանային իրանց վրայ վերցնել այդ խնդի-
րը։ Որ կապիտալիստները չեն կարող հասա-
րակական յեղաշրջում առաջ բերել, այսին-
քըն ոչնչացնել մասնաւոր սեպհականութիւնը
արտադրութեան միջոցների նկատմամբ, դրա
մասին ի հարկէ խօսելու կարիք չկայ, քանի
որ այդ բանը նրանց համար ինքնասպա-
նութիւն է։ Մանր բուրժուազիան (միջին և
մանր արդիւնաբերողները, խանութպաննե-

ըլը, արհեստաւորները և այլն) չեն կարող հասարակական յեղաշրջում առաջ բերել, որոնք նոյնպէս տնքում են կապիտալի ձնշման տակ: Դրանք բոլորը պիստ բանում են իրանց սեպհականութիւնը և ձգտում են ամեն կերպ պաշտպանել իրանց՝ խոշոր արդիւնաբերութիւնից: Դրանք ձգտում են պահել այն, ըերբութիւնից: Դրանք մերժում են ոչնչախնչոր անխօսափելի կերպով պէտք է ոչնչախնչ: Քանի որ մեքենաները կան, չի կարելի նորից վերսկսել մանր արդիւնաբերութիւնը: Չի կարելի պաշտպանել սայլով տաշնելը, երբ նրա կողքին գոյութիւն ունի երեսը, կաթուլիքին: Մանր բուրժուաները երազում են գուրս գալ իրանց աննախանձելի վիճակից և դառնալ խոշոր բուրժուայ, հետեւապէս կից և դառնալ կուել կապիտալիստական նրանք չեն կարող կուել կապիտալիստական կազմի հիմքերի գէմ: Բայց մանր բուրժուակազմի համար շատերը մի ոտով արգէն կանգնած են պրօլետարիատի մէջ: Ներկայ պարտ գայում նրանք կարող են հանդիսանալ իրեն պրօլետարիատի ընկերներ՝ կապիտալիստական կուելու համար: Յեղաշրջում չեն ների գէմ կուելու համար: Յեղաշրջում չեն կարող առաջնանել նաև գիւղացիները, քանի կարող առաջնանել նաև գիւղացիները, քանի որ նրանց մի մասը շահագրգուած է բոլոր նորատիրութեան զարգացման մէջ, իսկ միւս մասը կուում է մանր հողային սեպհակամասը կուում է մանր հողային սեպհակամասը:

Ները գիւղական համայնքի միջոցով կարուղացան իրանց շահերը պաշտպանել կարածատէրերի առաջ, և թէ այն՝ որ գիւղերում գոյութիւն ունէր համայնք, ինտելիգենցիան ենթազրում էր, թէ գիւղացիները արձագանք կը տան սօցիալիստական կազմի վարդապետութեանը: Բայց կեանքը ցոյց տուաւ, որ գիւղացիք երբէք տրամադրի չեն եղել սօցիալիստական վարդապետութեանը հետեւելու: Երբ ճորառութիւնն ընկաւ, գիւղացիութիւնն սկսեց բաժանւել հարուստ գիւղացիների, քիչ հող ունեցողների և հողազուրկների՝ բոլորն էլ տարբեր շահերով: Հարուստը ի հարկէ չի կուի կապիտալիզմի հարստահարութեան ոչնչացման համար: Քիչ հող ունեցողը կուում է, որպէսզի իր սեպհականութիւնը պահել կարողանայ, որպիսզի չդառնայ բատրակ—վարձու աշխատող: Նրա երազն է՝ հող ձեռք բերել և դառնալ աւելի հարուստ: միայն բատրակները՝ գիւղատնտեսութեան վարձու բանուրներն են բացառութիւն կազմում:

Միայն բանոր դասակարգը—պրօլետարոն է, որ կարող է աղ մեծ խնդիրը լուծել, ստեղծել սօցիալական հասարակութիւն, դա միակ դասակարգն է, որ շահագրգուած է մասնաւոր սեպհականութեան ոչնչացման մէջ արտադրութեան միջոցների նկատմամբ:

Կեանքը նրան այնպիսի պայմանների մէջ է գրել, որ նա հարկադրւի կուի մղել մասնաւոր սեպհականութեան գէմ արտադրութեան միջոցներով:

բացնել այն շահերի հակասութիւնը, որ
տեղի ունի կապիտալիստի և բանւորի
միջև:

Բանւորի և կապի-
կապիտալի և բանւորի տալիստի շահերը բո-
շահերի հակադրութիւնը: լորովին հակադիր են
միմեանց: Կապիտա-
լիստին անհրաժեշտ է վարձու բանւոր ու-
նենալ, որպիսի այդ էնրա կարողութեան,
հարստութեան աղբիւրը և որքան նա շատ
շահագործէ, այնքան այդ ձեռնուու է նրան:
իսկ բանւորի նպատակն է՝ ազատել այդ
շահագործութիւնից. և ահա այս հողի վրայ
միշտ տեղի կունենայ ընդհարումն կապի-
տալիստների և բանւոր դասակարգի միջև:
Եւ քանի գեռ գոյութիւն կունենան կապի-
տալիստական կարգերը, այնքան անխուսա-
փելի կը լինի կապիտալիստ և բանւոր դա-
սակարգերի միջև մղող պայքարը: — Այդ
պայքարը վաղուց է սկսւել: Նա առաջ ան-
դիտակցօրէն էր կատարում. բանւորները
կարծում էին, թէ յանցաւորը մեքենաներն
ու գործարաններն են, ուստի կոտրառում,
փչացնում էին նրանց:

Բայց շուտով այդ արարքների անմտու-
թիւնը հասկանալի դարձաւ և բանւորները
սկսեցին միանալ իրար հետ: Սկզբում այդ
միութիւնները տեղի էին ունենում մի գոր-
ծարանի սահմաններում, յետոյ նրանք ծա-
ւալեցին և մի քանի գործարանների բան-
ւորներն սկսեցին միանալ միմեանց հետ ի-
րանց շահերը պաշտպանելու համար: Գոր-

Պրօլետարիատը ուրիշ միջոցներով չի
կարող զգալի կերպով բարելաւել իր վիճա-
կը: Նա յանձնին անգործների միշտ մրցա-
կից ունի, իսկ կապիտալիստական կազմի
համար անխուսափելի է անգործութիւնը:
Որքան զարգանում է մեքենայի արտա-
դրութիւնը, որքան կանայք և երեխաներ
աւելանում են վարձու բանւորների թւին,
այնչափ մեծանում է պրօլետարիատի բա-
ռակը, որ առաջարկում է իր աշխատանքը
կապիտալիստին. բայց նոյն համեմատական
չափով չի աւելանում նաև աշխատանքի
պահանջը, ուստի և միշտ մի ահազին բա-
ռակ կայ, որ պատրաստ է արդիւնաբերու-
թեան ընդարձակման կամ գործադրուների
դէպում իր ծառայութիւնն առաջարկել
կապիտալիստներին:

Մանը արտադրութեան ընկնելը, գիւղա-
ցիների աղքատութիւնը և կրիպիստները, ո-
րոնց մասին խօսեցինք, այդ բոլոր հանգա-
մանքները անգործների բանակն աւելի են
մեծացնում: Մըանից արդէն կարելի է եղ-
րակացնել, որ այժմեան կազմի մէջ հնարա-
ւոր չէ բարելաւել պրօլետարիատի դրու-
թիւնը: Գուցէ առարկին՝ թէ «գործարանա-
կան օրէնսդրութիւնը» կարող է այդ անել
կան օրէնսդրութիւնը» կարող է այդ անել
որոշ չափով: Անկասկած՝ գործարանական
որոշ չափով: Անկասկած՝ գործարանական
տաւոր է, սակայն բանը նրանումն է որ
այդ օրէնսդրութիւնը անգործութեան երևալու
պատճառների առաջը չեն առնում. գործա-
պատճառների առաջը չեն առնում. գործա-

ծաղուլը դառաւ կռւի միջոց։ Գործադունեաւի շնորհիւ բանւորը հասկացաւ, որ ամբողջ երկրի բանւորները որոնք այս կամ այն արենատով են զբաղւում, անհրաժեշտօրէն պէտք է մի միութիւն կազմեն, որպէսզի հնար չինի փոխարինել նրանց ուրիշ, եկաւոր բանւորներով, երբ հաղորդակցութեան միջոցների գիւրութեան պատճառով այդպէս վարելը շատ հեշտութեամբ էր տեղի ունենում։ Հաղորդակցութեան գարգացումը հընար էր տալիս գործարանատէրերին օտար երկիրներից բանւորներ հրաւիրել իսկ մեքենաների գարգացումը վերացնում էր արհեստների մէջ եղած տարբերութիւնը, այնպէս որ միւնոյն բանւորը կարողանում էր աշխատել զանազան գործարաններում։ Այդ բոլոր պայմանները բանւորներին բերին այն գիտակցութեան, որ բոլոր բանւորների լու միջոցները անբաւարար են։ Բանւորներն ակեցին պայքարել աշխատավարձի աւելացման, պայմանաժամից գուրս եղած ըղբաղմունքների արգելման և բանւորական կրծատմտն մասին։ Սակայն անտեսարւույ կրծատմտն մասին։ Այդ կան այդ պայքարն ապացուցանում էր, որ նա չի վերացնում չարիքի արմատական պատճառը։ Եթէ մի ծառ արգելն սկսից հողը ապականափառ նրանու ու տերենները, բայց և այնպէս վընչերն ու տերենները, բայց և այնպէս վընչեան առաջն առնել չէք կարող։ Անտութեան առաջն առնել չէք կարող։ Անհրաժեշտ է հեռացնել սկզբնապատճառը—

անպէտքացած հողը։ Նոյն է նաև բանւորական կոփւը։ Նա այն ժամանակ միայն կարող է իր նպատակին՝ համեմ տնտեսական գրութեան բարելաւման ինդրում, երբ կը վերանայ բանւորի շահագործման պատճառը, այսինքն կապիտալիստական կարգերը։ Բանւորները տեսան, թէ իրանք որքան էլ կուռւմ են իրանց անտեսական դրութեան բարելաւման համար, այնուամենայնիւ իրանց գրութիւնը շատ քիչ է փոխւում։ Ակամայից հարց է ծագում, թէ երկի մի ըան կայ, որ նրանց ճնշում է և չի թոյլ տալիս լինել այն, ինչ որ իրանք են ցանկանում։ Այդ թոյլ չտուղը հէնց կապիտալիստական կարգերն են։ Այդ կարգերը ճնշում են ամբողջ բանւորական դասակարգը առանց խարութիւն գներու նրանց մէջ թէ ինչ արհեստներով են զբաղւում նրանք։ Զարիքի միակ հիմքը կապիտալիզմն է։ Եւ բանւորները ակամայից մտածում են, որ այդ չարիքը միայն այն ժամանակ կարելի է ոչնչացնել, երբ իրանց ձեռքում կը լինի երկրի կառավարութեան իրաւունքը։

Այդ բանից գրդած Կազմակերպում է աօցիալ՝ բանւորները մտադիմութափական կուսակցութում են միանալ հէնց թիւնը։

այդ նպատակի համար։ Երբ 48 թ.

լոյս տեսաւ Մաքսի և էնգելսի կազմած մասնիքեատը և նրանում եղած կոչը—«Պրօլետարներ բոլոր երկիրների, միաց՛ք», բանւորներն իսկոյն յարեցին նրան և այդ օրւանից

սկսեց բանւորական դասակարգի կազմակերպւելը առանձին քաղաքական կուսակցութեան դրօշի տակ: Բայց շուտով բոլոր երկիրներում հասկացան, որ հարկաւոր է նախ՝ առաջ բերել և զարգացնել մի բանական կուսակցութիւն և այդպիսի ուժեղացած՝ միացած ոյժով դուրս գալ կուելու կապիտալիզմի դէմ: Եւ ահա ամեն տեղ սկսում է առաջ գալ սօցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը: Կեանքը և կապիտալիզմի զարգացման եղանակը ցոյց տվին, թէ կոիւն ինչ ուղղութեամբ պէտք է տառել: Ակներև դառաւ, որ սօցիալ-դեմոկրատական կարգերի հաստատեն անխուսափելի է:

Կարգերի այդ եղանակը մեր ցանկութիւնով չի պայմանաւորւած, այլ ըլխում է կեանքից: Ինքը կապիտալիստական կեանքի եղանակը ցոյց է տալիս ապագայ հասարակութեան ձևակերպութիւնը: Մենք գիտենք, որ կապիտալիզմը տանում է դէպի հասարակական արդիւնագործութիւնների հսկայական զարգացման վըշանը: Ցիշենք արեստները: Օրինակ՝ Ամերիկայում շաքարի արեստը, որի ձեռքումն է հիմա ամրող Ամերիկայի ՄիացեալՆահանգների շաքարի արդիւնագործութիւնը, ոչ միայն բազմաթիւ գործարաններ ունի, այլ և երկաթուղիներ յատկապէս շաքար կրելու համար: Նա մասնակցում է բոլոր ձեռնարկութիւններին, որոնք կապ ունեն շաքարի արդիւնաբերութեան և առևտուրի հետ, մասնակցում է ա-

մւրի տրեստին, Ամերիկայի մեծ քաղաքներից մէկի խանութիւնների տրեստին, ելքատրաբարչի և մի քանի բանկերի տրեստին: Բոլոր գործավարութիւնը կառավարիչների ձեռքումն է: Կապիտալիստների անձնաւորութիւնը աւելորդ է դարձել: Իր ձեռքում կննդրոնացնելով արդիւնաբերութեան ձիւղերց որևէ մէկը, տրեստը ուսումնասիրում է շուկայի գրութիւնը՝ թէ նրաեղ ինչքան ապրանք է հարկաւոր: Տրեստում մենք տեսնում ենք արդիւնաբերութեան միացման եղանակը և շատ թէ քիչ կազմակերպւած փոխանականութիւն ապրանքի: Երևակայեցէք, որ արեստների զարգացումը առաջ է գնում, զանազան արեստներ միանում են իրար հետ և վերջի վերջոյ ամրող պետութեան արդիւնաբերութիւնը մի տրեստի սեփականութիւն է դառնում: Հիմա մնում է այդ տրեստին տէր գարձնել հասարակութեանը և ահա մենք կունենանք նոր կարգեր: Տրեստների գոյութիւնը և զարգանալը այն միտքն է յարուցանում, որ սօցիալիստական կարգերի գոյութիւնն անխուսափելի է: Այդ միտքն ընդհանրանում է պլոյետարիստի մէջ, որի շահագործւիլը չի պակասում նաև արեստների գոյութեան ժամանակ:

Կապիտալիստական Պրօլետարիատի գերիշը կարգերը սօցիալիստականի անութիւնը: Կանի վերածելու համար բանւորական կուսակցութիւնը պէտք է ձեռք բերէ քաղաքական իշխանութիւն: Այդ պայմանով միայն նա կարող է

գլուխ հանել արդիհնաբերական գործի գրաւ-
տումը յօգուտ ընդհանուրի տիրապետու-
թեան: Երբ երկրի կառավարութիւնը պրօ-
լետարիատի ձեռքն անցնի, նա պէտք է
միացնէ ամբողջ արդիհնաբերութիւնը, որով
առաջ կը գայ մի ընդարձակ տնտեսական ըն-
կերութիւն: Քանի որ քաղաքական իշխա-
նութիւնը բուրժուազիայի ձեռքումն է գլու-
խում, քանի որ նա աւելի ուժեղ է, քան
բանտորները, վերջիններիս շահագործմանսիս-
տեմի վերացնելը ցնորք կը լինի միայն:
Կապիտալիստները կը շահագործեն ոչ թէ
նըա համար, որ իրանք վատ, անիսիղ և
ագահ մարդիկ են, այլ որ անկարող են
ուրիշ կերպ վարւել: Իրար հետ մըցելով կապի-
տալիստները պէտք է ապրանքը էժանացնեն,
իսկ այդ հնարաւոր է միմիայն բանտորներին
շահագործելու միջոցով: Պէտք է երկարա-
շնել բանտորական օրը կամ ուրիշ միջոցնե-
րով աւելացնել բանտորների աշխատանքի
արդինքը: Կապիտալիստը ձգտում է պակա-
սացնել աշխատավարձը, քամել բանտորական
ուժից այն ամենը, ինչ որ կայ նրանում:
Կապիտալիստների քաղաքական իշխանու-
թեան վերացման միջոցով միայն կարելի է
արդիւնաբերութիւնը այնպէս կազմակերպել
որ չտուժեն աշխատաւորները, որ մեքենա-
ները մարդկութեան համար ոչ թէ չարիք,
այլ բարիք լինեն: Այդ բանը հնարաւոր է
միմիայն սօցիալական արդիւնաբերութեան
ժամանակ: Կապիտալիստական արդիւնաբե-
րութեան դարգացման եղանակների ուսում-

նասիրութեան միջոցով բանտոր դասակարգի
մեծ ուսուցիչներ Մարքս և Էնգելսը եկել են
այն եղակացութեան, որ նոր կարգերի
սահմաննելը անխուսափելի է, և ցոյց են
տել թէ ինչ է լինելու ապագայ հասարա-
կութիւնը ընդհանուր առմամբ: Նրանք ցոյց
են տել որ հասարակութիւնը պէտք է
իր ձեռքն առնէ արդիւնաբերութեան միջոց-
ները: Նրանք պարզաբանեցին պատմութեան
ամբողջ ընթացքը և ցոյց տւին թէ ինչու
բանտորների և կապիտալիստների միջև լի-
նելիք կտիւը անխուսափելի է: Նրանք ցոյց
տվին թէ ինչ նալատակների պէտք է հետե-
ւեն ամենուրեք կազմակերպւող բանտորական
կուսակցութիւնները: Բանտորները խարիս-
փում էին մթութեան մէջ, ինքնազգացմամբ
մի ելք էին վնասում—ինչպէս ոչնչացնել
չարիքը: և վերջին վերջոյ չնորհիւ սօցիալ-դեմո-
կրատների ուսման հակացան բոլորը և ստեղ-
ծեցին գիտակից կուսակցութիւն: Բանտոր-
ներն զգում էին, որ եթէ երկրի կառավա-
րութեան իրաւոնքն իրանց ձեռքում լինի,
իրանք կարող են բանտորական կեանքի չա-
րիքը վերացնել: Յեղափոխութեան ժամա-
նակ միշտ էլ այդ իրաւոնքը ձեռք բերելու
ձգտումն է առաջնորդել բանտորներին: 71 թ.
Փարիզում բանտորութիւնը տիրեց քաղա-
քին, բայց պարտութիւն կրեց կառավարու-
թիւնից: Այն ժամանակ բանտորութիւ-
նը կազմակերպւած չէր և որոշ քաղաքական
գիտակցութիւն չունէր, որպէսզի ոչ միայն
յաղթէր, այլև կարողանար կառավարել եր-

կիրը: Դրան խանդարում էր նաև այն, որ
Ֆրանսիայի պրօկտարիատը մենակ էր
կռւի դուրս եկել:

Միւս երկների պրօ-

Սօցիալական յեղափո- լետարիատը դեռ այն-
իութիւնն անխռուսա- քան ուժեղ և գիտակից
փելի է: չէր և նրան շրջապատող
պայմանները չէին մը-

դում նրան դէպի յեղափոխութիւն: Սօցիա-
լական յեղափոխութեան ժամանակը իրօք
դեռ հասած չէր: Բայց նա անվայման պէտք
է գար, երբ զարգացաւ կապիտալիզմը, և
ոչ ոք չի կարող ընդդէմ գնալ նրան: Ռուսա-
կան կառավարութեան ոչ մի օրէնք չկա-
րողացաւ սպանել բանուրական շարժումը:
Ռուսական բանուրութեան և լինտելիգեն-
ցիայի մղած դանդաղ կռւից, որ յաճախ
պարտութեամբ էր պսակում, աննկատելի
կերպով աճել է ոռւսական յեղափոխութիւ-
նը: Բոլորը ոտի կանգնեց, շարժւեց և այ-
նունեաւ ոչինչ չէր կարող խանդարել յեղա-
փոխութեան զարգանալուն: Բայց դեռ կէս
տարի առաջ ոչ ոք չէր կարող այդպիսի մի
տարի առաջ ոչ ոք չէր կարող խօսք բաց ա-
րան երեակայել և եթէ մէկը խօսք բաց ա-
նէր այդ մասին, նրան ցնորւածի տեղ կըն-
դունէին:—Բանուրի մղած կռիւը կապիտա-
լիստների դէմ, որ յաճախ բանուրների օգ-
տին էլ չի լինում, առաջացնում և զարգա-
ցնում է մի հզօր ոյժ, որ առաջ է բերում
համաշխարհային յեղափոխութիւն: Նրա հրա-
պարակ գալու վայրկեանը գուշակել չի կա-
րել, ինչպէս նաար չէր լինում գուշակել ոռւ-

սական յեղափոխութեան մասին, բայց այդ
օրը կը գայ, և այն կուսակցութիւնը, որ գի-
տակցում է այդ, պէտք է նաև հասկանայ, թէ
բնչ կը տայ և ինչ պէտք է տայ ժողովրդին
սօցիալական յեղափոխութիւնը:

Նա կարող է իր վը-
Սօցիալ-դեմոկրատական ըայ առնել այդ յեղա-
փոխութիւնն նպա- փոխութեան դեկապա-
տակները: ըութիւնը: Այդ բանը
պէտք է անէ սօցիալ-
դեմոկրատական կուսակցութիւնը: Նա պէտք
է նախապարասատէ բանուրական դասա-
կարգը այնպէս, որ նա հասկանայ թէ սօ-
ցիալիստական յեղափոխութիւնն անխռուսա-
փելի է: Սօցիալ-դեմոկրատիան ձգումը է
բանուրական շարժումը սօցիալ-դեմոկրատա-
կան դարձնել:

Նա զարգացնում է բանուրական մասսան-
ների գիտակցութիւնը, բացատրում է նրանց
ճնշող պայմանների ոչնչացման անկարելիու-
թիւնը, քանի վերացւած չեն կապիտալիս-
տական կարգերը. նա բացատրում է բան-
ուրական և այլ կուսակցութիւնների շահերի
հակադրութիւնը, որ այդ կուսակցութիւն-
ները չկարողանան օգտականութիւնը բանուրների ան-
տեղեակութիւնից ձայնաւութեան խնդիր-
ներում: Նա բացատրում է բանուրների մեծ
դերը ներկայի և ապագայի համար: Նա բա-
ցատրում է, որ բանուրականութիւնը կուե-
լով իր շահերի համար, միենոյն ժամանակ
կռւում է եւ բոլորի՝ ամբողջ մարդկութեան
շահերի և նրան տնտեսական ճնշումից ա-

զատելու համար: Բանւորական կուսակցութիմը կոիւ է մղում դասակարգային իշխանութեան վերացման, իրաւունքների հաւասարութեան համար՝ առանց սեռի և ազգութեան խտրութեան. նա կուռմ է ոչ թէ միմիայն բանւորներին շահագործելու, այլ առհասարակ բոլոր տեսակի ճնշումների դէմ: Սօց.-ղեմ. կուսակցութիմը բացատրում է բանւորներին, որ նա կուռմ է ոչ միայն բանւորական դասի համար տնտեսական բարեփոխութիւններ ձեռք բերելու, որոնք են՝ գործարանային օրէնքներ, բանւորական օրի կրծատում, գիշերային աշխատանքի վերացում և այն, այլ և հասկացնում է բանւորներին, թէ այդ բարեփոխութիւնները նոյն իսկ երեքն պաշտպանութիւն են գըտնում ունետր դասակարգի կողմից, երբ հարկաւոր է հեռացնել բանւորների միտքը նրանց կրակիցնող բանութեան խողըից: Ունետր դասակարգը համոզում է բանւորներին անդասակարգը «սօցիալիստական կարգերի» իրականանալի մասին չմտածել, այլ միմիայն բարեփոխութիւններով զբաղւել: Իսկ սօց.-ղեմ. կուսակցութիւնը բացատրում է, որ այդ բարեփոխութիւնները հարկաւոր են, որովհետեւ այլակէս բանւոր դասակարգը դատապարտած կը լինի Փիզիկապէս ահազկին գեր խաղալ պատմութեան մէջ,—մարդկութեան ազատարարի գեր: Այդ աւանդը դաւանում և պահպանում են ամբողջ աշխարհի սօցիալ-ղեմօկրտաները: Եւ նրանք հաւատացած են, որ իրանք կը տանեն յաղթութիւնը, ինչպէս որ հաւատում են, թէ գիշերից յետոյ ցերեկ է լինելու: Հաւատացած են, որովհետեւ սօցիալիստական կարգերի համար նրանց մզած կոիւը դատարկաբանութեան հետեանք

տական կարգերի ոչնչացումը և նրանց փոխարինումը սօցիալիստական կարգերով:

Սօցիալ-ղեմօկրտաները մարդկութիւնը դէպի ազատութիւն են տանում: Նրանք ասում են բանւորներին՝ թէև կապիտալիզմը դէպի սօցիալական կարգերն է տանում, բայց պրոլետարի գիտակցութիւնից, կամքից և գործունէութիւնից է կախուած այդ յեղաշրջման արագացումը: Ամեն մի սօցիալ-ղեմօկրտ պէտք է զգայ, որ իր գործունէութեամբ առաջ է տանում պատմութիւնը, որին անկարող են կասեցնել բուրժուազիան և կառավարութիւնը իրանց սւիններով:

Ամեն մի սօցիալ-ղեմօկրտ պէտք է հասկանայ, որ իր պաշտպանած դատը մարդկութեանը մօտեցնում է իսկական աշխատութեան:

Այս օրը, երբ մարդկութիւնը արդիւնաբերութեան միջոցների տէր կը լինի, այդ օրը իսկապէս նա աղատուած կը լինի: Պրօետարիատի դատը—մարդկութեան դատն է:

Ահա այսպէս, բանւոր դասակարգին վիճակած է ահազկին գեր խաղալ պատմութեան մէջ,—մարդկութեան ազատարարի գեր: Այդ աւանդը դաւանում և պահպանում են ամբողջ աշխարհի սօցիալ-ղեմօկրտաները: Եւ նրանք հաւատացած են, որ իրանք կը տանեն յաղթութիւնը, ինչպէս որ հաւատում են, թէ գիշերից յետոյ ցերեկ է լինելու: Հաւատացած են, որովհետեւ սօցիալիստական կարգերի համար նրանց մզած կոիւը դատարկաբանութեան հետեանք

չէ և ոչ էլ հիմնած է մարդկանց անարդարութիւնների դէմ բողոքող հնչիւն խօսքերի վրայ. նա ժամանակակից պայմանների առմիջական հետեւանքն է և նըանից է բղիում: Այդ ուղղութեամբ է ընթանում հասարակական կեանքը և ոչ ոք յետ դարձնել նըան չի կարող, ինչպէս որ մի ժամանակ բանուրներն ու արհեստաւորները չըկարողացան կանգնեցնել կապիտալիզմի ընթացքը, երբ առաջինները մեքենաներն էին փչացնում, իսկ վերջինները—ամեն տեսակ օրէնքներ հնարում խոշոր արդիւնաբերութեան դէմ: Երբ անցեալ դարի սկզբներում շատ գիտնականներ մտածում էին սօցիալիստական կարգեր հաստատել դիմելով դրա համար պետութեան կամ կապիտալիստի գթասրտութեան,—այդ անհրադութիւնորք էր, որովհետև նըանք սօցիալիստական կարգերի համար չեն կարող աշխատել: Այժմ կուում են բոլոր շահագըլուածները:

Պրօլետարիատի յաղթանակն զում են նա և միւս դասակարգերը և ահա թէ ինչո՞ւ նըանք զինուում են սօցիալ-դեմոկրատիայի դէմ և ամեն կերպ աշխատում են ոչնչացնել նրան: Բայց սօցիալ-դեմոկրատական բանակը շարունակ աճում է և զօրանում, իսկ այժմ նոր գաղնակից է ձեռք բերում յանձին ոռուական սօցիալ-դեմոկրատական կուսակցութեան:

Գլ. IV.

Մենք տեսանք, որ
Ո՞վեր են կոչում սօ- այժմեան կապիտալիս-
տիալ-դեմոկրատներ: տական կարգերը պէտք
է փոխւեն և որ այդ
նպատակին հետեւել կարող է միմիայն բան-
ուոր դասակարգը և միայն նա կարող է հաս-
նել նըան:

Երբ խօսում են սօցիալ-դեմոկրատների, նըանց շարժման, ձգտման, նպատակների մասին, շատ անգամ հասկանում են բոլորովին ուրիշ բան: Ահա թէ ինչո՞ւ այդ խընդիրների վրայ մանրամասն պէտք է խօսել: Ամեն մի բանուրական շարժում չի կարելի սօցիալ-դեմոկրատական անւանել:

Եթէ վարձու բանուրները գործադուլ են անում և աշխատավարձի յաւելացումն պահանջում, այդ տնտեսական շարժումն է, բայց ոչ երբէք սօցիալ-դեմոկրատական:

Եթէ բանուրները նպատակ ունեն տապալել այն պայմանները, որոնք բաժանում են հասարակութիւնը երկու՝ կապիտալիստ և պրօլետար դասակարգերի. Երբ վերջիններն ստիպւած են իրանց ոյժը ծախել և յետոյ աշխատավարձի աւելացման, աշխատանքի օրայ կրծատման և այլ բաների համար կուել—այդ արդէն նշանակում է, որ կռիւը սօցիալիստական կարգերի շուրջն է պը-տրուում և դա սօցիալ-դեմոկրատական է:

Առաջինները (կապիտալիստները) ձգտում են որքան կարելի է օգուտով ծախել ի-

բանց ապրամնքը, այսինքն բանւորական ոյժը, իսկ վերջինները պահանջում են, որ այդ ոյժը դադարի ապրանք լինելուց:

Եթէ որևէ բանւորական միութիւն կարծում է, թէ ներկայ կապիտալիստական պայմաններում կարելի է գործարանային օրէսսղութեան միջոցով վերացնել բանւորաների շահագործման երևոյթը և լարում է իր բոլոր ոյժերը այդպիսի օրէնքներ ունենալու համար,—այդ միութիւնը սօցիալ-դեմոկրատական չէ:

Սօցիալ-դեմոկրատներն ասում են, թէ որքան էլ բարելաւսի գործարանային օրէսսղութիւնը, բանւորների շահագործութիւնը դարձեալ կը լինի, քանի դեռ կան կապիտալիստական կազմերը, եթէ մի որևէ բանւորական կազմակերպութիւն քաղաքական ազատութեան համար է կուռմ, կարծելով թէ այդ ամենազիստորն է, և նպատակ չունի սօցիալիստական հասարակութեան ձգտել,—այդ կազմակերպութիւնը սօցիալ-դեմոկրատական չէ: Վերջինս քաղաքական ազատութեան վրայ այն հայեացքն ունի, որ նա մի անհրաժեշտ պայման է միայն ապագայ կազմերի համար կուելու մէջ:

Եթէ մի որևէ բանւորական կազմակերպութիւն նպատակ է դրել ոչնչացնել շահագործութիւնը՝ սպանելով խոշոր կապիտալիստներին կամ պետական մարդկանց, ուրոնք պաշտպանում են կապիտալիստ դասկարգը,—այդ կազմակերպութիւնը սօցիալ-դեմոկրատական չէ: Վերջինս տարբերում է պրոլետարիատի և մանր սեփականատէրերի շահերը: Ճիշտ է երկունով էլ կուռմ են խոռոշը կապիտալիստների դէմ, բայց մանր սե-

ձին անհատների դէմ չէ կուռմ, այլ այն պատճառի, որ ստեղծել է կապիտալիստներին ու բուրժական պետութիւնը, այսինքն կուռմ է ոչ թէ կապիտալիստների, այլ կապիտալիզմի դէմ:

Եթէ որևէ կազմակերպութիւն կուռմ է սօցիալիստական կարգեր ստեղծելու համար, բայց այն կարծիքին է, որ այդ բանը իրագործել կարող են գլխաւորապէս զիւղացիք, ուստի նրանց շրջանում պէտք է քարոզել որովհետև նրանք բանւորներից շատ են,—այդ կազմակերպութիւնը չի կարող սօցիալ-դեմոկրատական կուչեր: Վերջինս ասում է որ սօցիալիստական կազմը իրականացնել կարող է միմիկայն բանւոր դասակարգը, իսկ զիւղացիներից այդ գործում մասնակցութիւն կունենան նրանք, որոնք սեփականութիւն չունեն, այսինքն մշակները և զիւղական պրոլետարիատը:

Այն կազմակերպութիւնը, որ նպատակ ունի սօցիալիստական կազմ հաստատել, բայց այդ ինդրում տարբերութիւն չի դընում մանը սեփականատէրի և պրոլետարիատի մէջ և յայտնում է, որ նա հաւասարապէս պաշտպանում է աշխատաւոր ժողովրդի շահերը (մանը սեփականատէրն էլ է կուռմ խոշոր կապիտալիստների դէմ),—այդ կազմակերպութիւնը սօցիալ-դեմոկրատական չէ: Վերջինս տարբերում է պրոլետարիատի և մանը սեփականատէրերի շահերը: Ճիշտ է երկունով էլ կուռմ են խոռոշը կապիտալիստների դէմ, բայց մանը սե-

փականատէրը ձգտում է կապիտալիստ դառնալ, իսկ աղօլետարիատը ձգտում է ոչընչացնել կապիտալիզմը, Միաժամանակ թէ այս և թէ այն շահերի պաշտպան լինել չի կարելի:

Եթէ մարդկանց մի որոշ խումբ մտածում է կապիտալիստների մէջ քարոզներ կարգալով համոզել նրանց, որ ամօթ է բանուորներին շահագործել և դրանով սօցիալիստական կազմ հաստատել.—այդ խումբը սօցիալ-դեմոկրատական չէ, Սօցիալ-դեմոկրատները վերեկց չեն սպասում օգնութիւն, այլ բանւորների ազատագրութեան հարցը իրանց սեպհական դատն են ճանաչում:

Վերը բերած օրինակներից պարզ է, թէ մենք սօցիալ-դեմոկրատ կանուանենք նըրանց, որոնք նապատակ են դրել իրանց համար սօցիալիստական կազմ հաստատել, որոնք հաւատում են, որ նա անխուսափելի է և որ նրա իրականացումը կարելի է պըրօիետարիատի ձեռքով կատարել՝ ոչնչացնելով կապիտալիստական արդիւնաբերութեան հիմքը՝ մասնաւոր սեպհականութիւնը արդիւնաբերութեան միջոցների նկատմամբ:



«Ազգային գրադարան



NL0196304

ԳՐԱԴԱՐԱՆԻ „ՊԱՇՎԱՐԻ-Ի

ԼԱԶՈՒ ԵՎ ՏՐՈՅՆ.

№ 1. Ո՞րն է ԽԱԿԱԿԱԽ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱՌԹԻՄՆԸ
Կազմեց Յ. Ա. (Աղառուսակ)
Գին է 2 կրոգ

№ 2. ԲԱՍՏՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ
ԽԵՐՄԱՆԻԱՅՑՈՒԹՅ
ՏԱՏԵԱՆԱ ԲՈՎԱՆՈՎԻՉԻ
Թարգմ. Ա. Պայտառ
Գին է 5 կրոգ

Ա. Մ Ի Ն Ի Ն

№ 3. Ի՞՞Չ Ե՞՛Ս ՄԻՌԱՐԵՑՅՈՒԹԻ
ՍՈՑԻԱՀ-ԴԵՄՈՌԵՑՅՈՒԹԻ
Թարգմ. Յ. Ա.
Գին է 5 կրոգ

№ 4. Ո՞րն է ԽՈԽՈՅԱԿ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱՌԹԻՄՆԸ
Կազմեց Յ. Ա. Ի. ապ.
Գին

ՏԱՅԱՅՈՒ, ԼԱԶՈՒ ԵՎ ՏՐՈՅՆ.

Պ. ԴԱՖԱՐԻ

№ 5. ԽՐԱԲՐՈՒՐ ՃՈՒՄՈՎԱՐ
Ն. ԼԵՆԻՆ

№ 6. ԳՐԱԴԱՐԱՆ ԿԱՐԻՔԱՅԵՐ